# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Տուֆաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Շախմատ»- ( 3 դասաժամ), «Դասվար» - ( 14 դասաժամ), «ԹԳՀԳ»-(10 դասաժամ), «Երաժշտություն»-(6 դասաժամ), «Կերպարվեստ»- (6 դասաժամ), «Տեխնոլոգիա» -( 4 դասաժամ) առարկաների թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմվում է հաստատության կողմից և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

*1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի.*

*2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)*

*3. Անձը հաստատող փաստաթուղթ*

*4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում:*

*5.Ինքնակենսագրություն (Ձև 5).*

*6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.*

*7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.*

*8. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)*

*9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).*

*10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2025թ.** սեպտեմբերի 02-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թվականի** սեպտեմբերի 19-ին, ժամը 14:00-ին, Շիրակի մարզի Տուֆաշենի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ խոշորացված համայնք, գ, Տուֆաշեն

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)-18-48-14 հեռախոսահամարով: